# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի
2017 թվականի հունիսի 19-ի N 141-Ա կարգադրությամբ
ձևավորված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Արթիկի համայնքապետարան 22-ը հունիսի 2017թ. ժամը 11:00
(ք. Արթիկ , Ազատության հրապարակ 1)
Մասնակցում էին՝

**<u>Հանձնաժողովի նախագահ՝</u>**
Արտաշես Կարախանյան

**<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>**
Հրանտ Ղազոյան
Մարիամ Փանոյան
Ռուզաննա Ավագյան

**<u>Հանձնաժողովի քարտուղար՝</u>**
Բաղդասարյան Լարիսա ՝ Գնումների համակարգող

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից հայտարարված ՇՄԱՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/59 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.06.2017թ.-ին հաստատվել և էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հրապարակվել է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Գ. Նժդեհի փողոցի եզրաքարերի ուղղման, ջրահեռացման առվակի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի հրավերի տեքստը: Գնման ընթացակարգի հայտերի ներկայացումը իրականացվել է էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով:

1. ՇՄԱՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/59 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության երկու հայտ է ներկայացվել: Հայտ ներկայացրած մասնակիցները հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ և ԱԱՀ վճարող:

| Հ/Հ | **Մասնակցի անվանում** | **Մասնակցի հասցե** |
|---|---|---|
| 1. | «Վահրադյան Շին» ՍՊԸ | ք. Ստեփանավան, Չարենցի 175 |
| 2. | «Ույուտ Սենթր» ՍՊԸ | ք. Արթիկ, Աբովյան 22 |

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են ՝

| Հ/Հ | **Գնման առարկան** | **Մասնակիցներ** | **Գին՝ առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/** | **Գին՝ ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|
| 1 | Արթիկ համայնքի Գ. Նժդեհի փողոցի եզրաքարերի ուղղման, ջրահեռացման առվակի վերակառուցման աշխատանքներ | «Վահրադյան Շին» ՍՊԸ | 1 300 000 / մեկ միլիոն երեք հարյուր հազար/ | 1 560 000 /մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ |
| | | «Ույուտ Սենթր» ՍՊԸ | 1 359 000 / մեկ միլիոն երեք հարյուր հիսունինը հազար/ | 1 630 800 /մեկ միլիոն վեց հարյուր երեսուն հազար ութ հարյուր/ |

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց, որ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագիրը՝ Վճարման պահանջագիրը, չի համապատասխանում հրավերի պահանջներին (մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը կազմում է գնային առաջարկի 2 %-ը):

«Վահրադյան Շին» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան:

Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց վերը թվարկված հանգամանքները և կայացվեց որոշում՝

1. Մերժել «Ույուտ Սենթր» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը:
2. 1 չ/բ համար ներկայացված հայտի հիման վրա «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:
3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Որոշումը ընդունվել է կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Եզրակացության ստացումից հետո:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | _____ | Ա. Կարախանյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | _____ | Հ.Ղազոյան |
| | _____ | Մ.Փանոյան |
| | _____ | Ռ.Ավագյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | _____ | Լ. Բաղդասարյան |